

ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ

Հասցե՝

Redaction du journal

„VERADZNOUTIOUN“

ROUSTCHOUK (Bulgarie)

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Ա Մ Է Ն Ե Ր Կ Ր Ի Հ Ա Մ Ա Ր

Sarkislan 10 Erulif, պեղախեայ 5 Erulif.

Հասցե՝

Редакция на вѣстникъ

„ВЕРАДЗНУТЮНЪ“

РУСЕ

ՌՈՒՍԱՍՏԱՆ

— 0 —

Թուով է, թէ այլևս անտարակուսելի է, որ ռուսական բռնակալ ընդհանր գտնուով է իր անկման նախընթաց օրը: Ռուսաստանի ներքին գրութիւնը, ահա տարիներից ի վեր, խիստ տագնապի մէջ է: Յեղափոխական խըրտուամենքն ու ոգին գրաւել են երկիրը սկսած հիւսիսից մինչև հարաւ: Կողկաս: Բանտարկան շարժումներ, գեղջկական ազգայնական շարժումներ, աստուղական շարժումներ, մտքերի ծայրայիտ գիտնաթիւններ ու վայրոյթ հասարակութեան ամեն խաւերում, մինչև իսկ շինարարական շինարարական մէջ — բարբը ստացել են ահագին ծառայ, յեղափոխական գոյն ու նշանակութիւն, մի զարհուրելի սպառնական մղումն ընդդէմ տիրապետող դէսպոտական ընդհանր, մի հոգմային անարգել փշուռն, որ իր հզօր շնչով աւելու, քշելու է ամեն գիւմայութիւն, ամեն ըմբոսահակութիւն, բռնակալութեան ամէն պատնէշ, ամեն յենարան, ամեն բերդ: Ռուսաստանն այս րօպէին նման է մի հսկայածաւալ կաթնալի, զըրւած մի սարսափելի հրդեհի բոցերի վրայ: Չուրը նրա մէջ է ռուս է կատաղի ուժգնութեամբ և իր զօրաւոր գործընթացով ամեն րօպէ սպառնում վեր թռցնել ու գլորել կաթնալի ծածկոցը: Գիտակցութիւնը և ազատութեան ոգին այսօր գուրս են ժայթքում ոյգ ձիւնէ թագաւարութեան սակթաքուն մնացած ահաւոր հրաբխից: Իրերի ոյգը կատարում է իր գերը: Առաջադիմութեան մշտադարձ էլօլիցիայի սօցիալական օրէնքը, նախ թաքուն յորձանքի պէս, ապա հեղեղի ուժգնութեամբ, նւաճել է ռուսական իրականութիւնը, տալով սրան հասարակական նոր ձևեր ու նոր պահանջներ:

Եւ ա. գ. շարժումներն այլևս խմբային չեն, մասնակի չեն, այլ հանրային, մասնային:

Կառավարութիւնը, բնականաբար, ստքի է կանգնեցրել ընդհանրային, յետադիմութեան պահանջներ:

պանդոկանութեան, ծառայականութեան, բռնակալութեան ամեն անուրը սյոթերը չլուծւած լուհամար իր կոյժանուղ շէնքը: Ամեն մի շարժում, թո՛ւ բանտարկան, թո՛ւ գեղջկական, թո՛ւ աստուղական, հարաւում, խեղդում է հարիւրաւորաբարտումներով, բանտարկութեամբ, ստորկանութեան ու զօրքերի խարաչանով ու կրակով, շարժումով է ժողովրդային արիւնով: Գիւմայութիւն իսպառնական յարաբարութիւնների իր այս կամ այն բարեփոխման միտումով, միանգամայն նա ռաբաժում է բոլորովին հակառակ տնօրինութիւններ, գործածում է աւելի ճնշող միջոցներ: Եւ այդպիսով մի կողմից ցոյց տալով իր ապիկարութիւնը գիւմայութեան ժողովրդային աւելի և աւելի բարձրացող հոսանքին, միւս կողմից նա իր ուրի, իր գաղանթեան, իր հարածանքների կատաղութեան շտիք չէ կարողանում պահպանել: Այդ կրկնակի փոխ ստփոխ խարդախ և վայրագ ընթացքը գալիս լրացնում է դժգոհ ու խլրտուող տարրերի զայրոյթը, աւելի զրգուում նրանց մարտական կրքերը և նպաստում այն ժամի շուտափոյթ ճնշման, երբ անցեալի և ապագայի ոյգերը գալու և զարնելու են միմիանց գուցէ պատմութեան մէջ գեռ չը տեսնուած սաստկութեամբ: Եւ այդ սարսափելի ընդհարման վախճանը կարող է միայն լինել ապագայի յաղթութիւնն անցեալի վըրայ, մի նոր և ազատ Ռուսաստանի հաստատումը ներկայ բռնակալութեան միանգամից ընդմիջող կործանում շէնքի աւերակների վըրայ: Դա՛ կը լինի ռուսական յեղափոխութեան գործը:

Մենք ասացինք, որ այդ շարժումները բազմաժանգուտ և բազմակողմանի են, ունենալով պատճառներ ռուսական ներկայ իրականութեան ամեն շերտերում: Գիւմայական հողտիրութեան այն համայնական գրութիւնը, որ մնացորդ է նախնական ժամանակներից, պահպանելով մինչև այժմ կոլտուրայից ցած ատիճանի վըրայ գանուղ ռուսական գեղջկականութեան մէջ, արդէն գրեթէ քայքայած և քայքայման վիճակի մէջ է ներկայումս: Եւ Ռուսաստանի գեղջկական ահագին մեծամասնութիւնը, երկար տարիներից ի վեր, գտնուում է ֆինանսական ու տնտեսական մըշտական տագնապում, այլ նաև քրօնիկական ամենամասնական կործանութիւններ: Գիւմայական գործառնութիւնն և սիստէմներում:

ման վիճակի մէջ է ներկայումս: Եւ Ռուսաստանի գեղջկական ահագին մեծամասնութիւնը, երկար տարիներից ի վեր, գտնուում է ֆինանսական ու տնտեսական մըշտական տագնապում, այլ նաև քրօնիկական ամենամասնական կործանութիւններում: Եւ ռուս գեղջկականութեան համար կեանքի և մահու խնդիր է յայտնուում այսօր արմատական, այլևս անյետաձգելի ընթացքների գործադրութիւնը: Գիւմայական կարգերում և ձևերում, հողատիրութեան և հողի մշակման եղանակներում և գրանց հարկային ու ֆինանսական գործառնութիւններում ու սիստէմներում:

Դրա հետ միասեղ — և մի շարք երեւոյթներում պատճառակ լինելով գիւմայականութեան համայնական գրութեան քայքայման — աւելի և աւելի զարգացան Ռուսաստանում կապիտալական ինտուսդրիան ու ֆինանսական գործառնութիւնները: Ապա կապիտալիստ դասակարգն իր պատճառական հարածը տեսնաւ ռուս ազնւականութեան, գառնալով տէր սրա հողերի և կամ սրան ստիպելով ենթարկել կապիտալական օրէնքներին, և այդպիսով սկսաւ ձգտել աւելի և աւելի ստորագրելու նրան նիւթապէս և կամ գրաւելու նրան իր շարքերում: Կապիտալի զօրութիւնը յայտնեցաւ անյաղձելի: Բռնակալ կառավարութիւնը, որ առաջնապէս նուսում էր ազնւականութեան և սրա հողատիրական զօրութեան վըրայ, այդպիսով տեսաւ, որ իր շէնքի հիմնաքարերից մէկը բոլորովին խախտելու վըրայ է: Այդ ժամանակներից կապիտալիստ դասակարգն աւելի որոշ կերպարանք ստանալով, հանգիտացաւ երկրի նիւթական գրութեանը ոյգը, սրի օգնութեան կարօտը զգաց այնուհետև նոյն ինքը գէսպօտական կառավարութիւնը: Այդ բաւական չէ. բուրժուական գառակարգը յայտնեցաւ նաև երկրի մտաւոր, վարչական և ինտելիկենայ ոյգը և նրա առաջ կամայ — սկիւմայ բայւեցան հասարակական ու կառավարական գործառնութիւնների դռները: Եւ այն, ինչ պատմա-

կանապէս անխուսափելի էր, կատարուում է այսօր մեր աչքի առաջ: Բուրժուական յինքան զարգացել է, որ այլևս անյետաձգելի պահանջ է ծագել — նոյն իսկ այդ զարգացման անարգել առաջադիմութեան համար — աւելի և աւելի ընդլայնել ապարդէզը նրա, բուրժուականի, կենդանի ոյգերի առաջ, սրանց ֆինանսական, ինտուսարիական և այլ տնտեսական գործառնութիւններին համար: Եւ ահա այդ րօպէից է, որ բուրժուական Ռուսաստանում հէնց նոյն այդ պահանջի գործադրութեան համարձգաց անհրաժեշտութիւն քաղաքական կարգերի փոփոխութեան, քաղաքական ազատութիւնների հաստատման, ուր ինքը, այլևս հանդիսանալով տիրապետող դասակարգ, կարողանայ անարգել կերպով, նոյն իրա ստիգծելիք օրէնքների զօրութեամբ անընդհատ առաջ խաղալ և զօրացնել իր կապիտալական ոյգը: Այսօր պուրժուական Ռուսաստանում ձգտում է լինել քաղաքականապէս կառավարող դասակարգ: Եւ ահա ինչու, եթէ ո՛չ սոնկաւին բացարձակ դասակարգային քաղաքական գործունէութեամբ, գէթ չի պատմական շահերով ու գիտակցութեամբ նա ունի նոյնպէս յեղափոխական դեր ընդդէմ ցարերի բռնապետութեան:

Բուրժուականի ժագումն ու զարգացումը պայմանաւորող է մէկ ուրիշ գառակարգի գոյութեան, դասակարգ, որ կապիտալիզմի հիմնական գործիքն է, մըսից, շղերից և արիւնից կազմուած գլխաւոր մեքենան է: Մենք անւանեցինք բանտարգատակարգը: Սա իր պատմական շահերով ու ձգտումներով բերում է մի բոլորովին նոր աշխարհահայացք, մի նոր հանրակենցաղ մարդկային հասարակութեան մէջ, սօցիալական, տնտեսական ու բարոյական լիովին նոր յարաբարութիւններ մարդկային խմբերի և անհատների մէջ, և իր այդ պատմական դերով նա յայտնում է ազատարարը ո՛չ միայն ռուսներ և աշխատաւոր մեծամասնութեան, այլև ընդհանուր մարդկութեան մարդկային երկու սե-

ատի վաճանքը, պիտրե յառաջապահը ըլլալու: Ահա և անոր լաւ ըմբռնուած գործը: Վստահ եղէք որ ան իր տրամադրելի բաւակա՛նաչափ կենդանի ուժերն ունի իր այս գործը մինչև վերջը կատարելու:

Կեօրկի Պոստալ

Պուրկ. Սօց. Կուսակցութեան կեդր. քօմիթէի անդամ Կեօրկի Պոստալի սոյն յօդուածը—որուն առաջին մասը նախորդ թիւին մէջ հրատարակուած էր—յատկօրէն կը պարզէ այն հիմնական պատճառները որոնք տեղի առնելին յիշեալ Կուս. կան պատակտուն վստահ ենք որ մեր համակրելի բարեկամին այս գրուածը հետաքրքրութեամբ կը կարդացուի մեր բոլոր ընթերցողներուն կողմէն:

Խնդր.

Թ Ո Ռ Ի Յ Ի Կ Ա Կ Ն Ա Ր Կ Ն Ե Ր

Ո՞վ է ասում, որ հայ ազգը երջանիկ չէ, զուրկ է ինքնաճանաչութեան, գիտակցութեան խոր զգացումներից: Ո՞վ է պնդում, որ հայ միլիոնատէրը, հայ փարթեամ մեծատունը անզգայ է դէպի կոտորուող, մորթուող հայ ժողովուրդը... Թ՛չնամու զըրպարաւթիւններ են... արոնք գիտութեամբ տարածում են մամուլի էջերում, հայ հարուստներին վարկարեկ անելու գիտաւորութեամբ... Հասարակութեան աչքում: Կարգացէք մեր լէզու կամ յեղափոխական մամուլի էջերը, հետեւեցէք ուշադրութեամբ կատարող միլիոնար կանա շորտաշարժ և երևոյթներին և դուք էլ ուրախացէք: Միլիոնարները: Գու էլ, մայր հայաստան, ուրախացիր անմահ հայրենասիրի հետ, ճեւեղեղով քո ողորդ գործիք, փառք ու պատիւ կը բերեն քեզ քո մարմնապաշտ մեծատունը: Իսկապէս, ի՞նչ չնաչխարհիկ առատաձեռնութեան օրինակներ են տալիս «հայոց ազգի պարծանքները», Կովկասում և արտասահմանում:

Ահա՛ այս ինչ երեւի բարեբարը 100000 ռուբլի է նուիրել այսինչ տեղը ռուսաց դպրոց կառուցանելու համար... Ի փոստ ազգի և եկեղեցւոյ. այս ինչ աշխարհահասակ Կրեմլը մի անհաւատալի գումար է նուիրել քառասունամեան այս ինչ մայրաքաղաքում եկեղեցի կառուցանելու համար, որպէսզի իւր և իւրայինները, հայոց ազգի պապերի հոգւոյ փրկութեան համար պատարագ մատուցանէ Տէր փիլիպոս քահանային և համայն ընդնեցեալներին ապահովեցնէ իրենց գեղեցիկներում հանգիստ ու խաղաղ մնալու համար. առանց աղմուկ բարձրացնելու, մինչև որ վերջին գատատանին բոլորի բողոքները կը լուռն և տնօրինութիւններ կը լինեն ըստ պատշաճի:

Ո՞ր անզգայ ընթերցողը այս տեսակութիւնը կարգալով չի զգածուի... Նոյն իսկ ուրախութիւնից չի արտասուի... Եւ արգարե ի՞նչ արտայայտ մեծագործութիւն, ի՞նչ արտաւտոց բարեգործութիւն... Եւ, վերջապէս, ի՞նչ գովասանքներ կը շուրջաւեր հայոց փառաւոր մամուլի մեր բարեգործի և հազուադիպէջ բումբաբարի յղիպացած քիմքը շոյելով, մանաւանդ եթէ տարեկան մի քանի տասնեակ կամ հարիւր ռուբլի էլ հասարակութեան ցաւերով սոցորուած անզուգական խմբագիրներին է նուիրել, իբրև բաժանորդագիր, իր թերթը ձրի տարածելու և հասարակութեան մէջ ընթերցանութիւն և լուսաւորման գործը տարածելու համար:

(Շարունակելի)

Ս. Հայրապետ

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ն Ա Մ Ա Կ Կ Ո Վ Կ Ա Ս Ի Ց
I
1903 Յ/18 Օդոտոսի
Կատաղի պայքարը մղելու շըր

Չոցներ չէին պակսէր իրեն. Սան-Սթեֆանեան Պուրկարիտի, նոյնինքն ազատութեան փաստը, և եթէ աս ալ չըբաւէր, էնթրիկը ու քօմիթիւնը գերազանցապէս պիտի կատարէին իրենց գերը:

1878-էն մինչև 1886՝ մեր նոր քաղաքական կեանքի է՛ն փոթորկալից ու սեւ ժամանակաշրջանին է: Ի սկզբան Ռուսիա հակառակ ըլլալով, Պուրկարիտի մէջ անկախ իշխանի մը գոյութեան, երբ տեսաւ որ այնքան ինթրիքներով, խռովութիւններով ու գործակալներով չյաջողեցաւ Պաթեմպիւրկը իրեն հըռ պարզ յիմնապետի մը վերածել. որչա՞ց վերջապէս անոր արտաքսումը Պուրկարիտին: Բայց միութեան խնդրին նկատմամբ ալ անհանգիստ էր ան. նախ և առաջ ձեռքի տակ էր գրգռէր Պուրկարիտը, խորհելով որ այս կերպով պիտի ընդարձակէ իր ապագայ «Անդրդանուրեան նահանգը», բայց յետոյ չարաչար խաբուած այդ «նահանգէն» վրձնակապէս հակառակեցաւ հարաւային

Չանի մէջ ենք: Ռուսիոյ և Կովկասի բոլոր գործարանական քաղաքները լանուր գատակարգը ոտքի է կանգնել և իր պահանջների գոհացում է պահանջում:

Ապրիլ 27-ի և Մայիս 1-ի ցոյցերը որոնք տասնեակ զոհեր տուին և մի շարք ձերբակալութիւններ—Բագուում գեռ ևս վառ են ժողովրդի յիշողութեան մէջ: Կատարու թիւեր պահ մի կարծեց թէ լանուրներին լաւ դատուեց, որով խաղաղութիւնը երկար ժամանակ ապահոված կը կարծէր: Սակայն դա առեւելոյթն էր. չարագուշակ ամպը կապիտալիստի ու Յարի հարկոյնից անհետացած չէր—շուկներ կը պտտէին Սեպտեմբեր ամսի ցոյցերու մասին ու ցոյց փրթաւ կարծած ժամանակից ասելի շուտ, աւելի մեծ թափով, աւելի մեծ չափով ու լայն ծաւալով — գործադուլ է համայն քաղաքներում — ուր բանուր կայ, և Բագուոն այդ հարստութեան թաղուհին, որը դէպի ինքն է քաշեր ոչ միայն Ռուսիոյ ալ և Անգլիայի ու Ամերիկայի միլիոնատէրերը, այսօր այնպիսի մի մեռելութեան մէջ ընկաւ, որ իր կեանքումը չէր տեսած և ոչ էլ տեսնել կե՛րազէր: Սարափ էր տիրել կապիտալիստի ու կառավարութեան վրայ. նոքա պահ մի քաղաքած շրմիջեն ու գլուխները կորցրած չգիտէին ինչ անել, ինչ միջոցի գիմնել:

Գործադուլը ընդհանուր էր արհեստանոց նաւթահանք, գործարան, երկաթուղու արհեստանոց (депо), նաւաստիներ և այլն: Իրենք, կազմակերպողները չէին յուսար թէ այդքան մեծ ծաւալ կընդունի. սակայն դա իրողութիւն էր:

Մեռելութիւն էր տիրում ամեն տեղ — մանաւանդ գիշերը, ուր ոչ մի կանոնաւոր լուսաւորութիւն չկար (էլէքտրական է ամբողջ լուսաւորութիւնը) հազարաւոր մարդիկ մութի մէջ էին

անցկացնում գիշերը: Եթէ անծանօթ մէկը մտնէր այդ միջոցին Բալախանի, սե քաղաք կամ Բեքի — Հեյրաթ, ճիշտ կենդանութեան մէջի ջախտ պատառի գիւթական գաւազանի կամ օձէ մտրակի շօրութեան ենթարկուած քարացած աշխարհը ընկած կը կարծէր ինքն իրան — այն աշխարհը, որը անգուլ գիշերցիների խոսում էր աշխատանքը: Իշանը՝ Բեքի—Հեյրաթի նաւթաբեր հողերի անուրդի տալն եղաւ Յուլիսի 2 ոտքի կանգնեցան մեքենական գործարանների արհեստաւորները, որը արձագանգ գլուտաւ մնացեալ սե քաղաքի գործարաններում ու Բեքի—Հեյրաթի նաւթահանքերում:

Բալախանին, ուր կենտրոնացած էր բանուր գատակարգի ըստաւ մասը — Յուլիսի 5-ին արցազանգ տուեց:

Ցերեկայ ժամի 10—11 կը լինէր անժամանակ սուրցները պահ մի կարծել տին թէ հրդեհ կայսակայն երկար ժամանակ ծուխ չը լինելուն պատճառաւ հանելուկ մնաց. իսկ ճաշից յետոյ արդէն յառաջ եկան խորհրդ, որոնք շըրջելով նաւթահանքերը ստիպում էին կանգնեցնել աշխատանքները և երբ մի քանի տեղ գիմազրութեան հանդիպեցին՝ սկսեցին բռնի դադարեցնել տալբաց թողնելով շոգեկաթսաների մէջ եղած շոգին:

Միւս օրը առաւօտեան պատահամբ ոստիկանատանէի, ոստիկանապետին տեղեֆոնով իմաց տրեց թէ 300—400 բանուրներ ներս խուժեցին Շիբաեվ և ընկ. նաւթահանքը և պահանջում են ընդհատել աշխատանքը: Ոստիկանապետը գոյնը ձգած գիմեց տեղեֆոնով գլխաւոր ոստիկանապետին (полициймейсторъ) խորհուրդ հարցնելու համար այս վեղջին պատուիրեց՝ ձեռք չտալ — չգիմագրել նոցա, ալ ըաւականանալ միայն գրաւոր տեղեկութիւն տալց (донесение):

ցած անյաջողութիւններուն միակ յանցաւորը: Ատկէ վերջը փորձեց Պուրկարիտի գահը բարձրացնել տկարամիտ թաթար խան մը, իրեն կոյր ու համի գործիք մը, բայց հոս ալ իր ծրագրերը շուրջ ինկաւ: Մինչդեռ, այս միջոցին Պուրկարիտի մէջ ալ լուս կըսկըսի Ստամբուլ օրէն նշանաւոր Էթիմը, որ է՛ն վերջը կարեց ռուսական ազդեցութեան թելը... Իր ներքին անընդհատ կռիւներով, անհամաձայնութիւններով տկարացած երիտասարդ, խաղաղ ապաստանի մը տակ հանգստանալու, հետո ռուսական էնթրիկներէ ու ոտնձգութիւններէ, Բոյոց, աւաղ, շատ սուղի նստեցու իրեն այս հանգիստը:

քարգ. Շահպազ

(Շարունակելի)

ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂՁԻՆ ՍԷՋ

Ռուսիոյ և Պոլսոյ միջև բարձր ու հատաատուն պատնէջ մը քաշելու համար, Եւրոպա Պալքանեան փոքրիկ պետութիւններու մէջ երկպառակութեան և անհամաձայնութեան քանի մը խնձորներ ձգեց. Պետարպիտան արուեցաւ Ռուսիոյ, Տօպրուճան Ռուսիոյ, Բիբոզ և Նիշ՝ Սերպիտի իսկ «Բիքնաւար» Մակեդոնիան Ռուսիոյ: Այս կերպով Ռուսիան անհայտ ինքնամի գարձաւ Ռուսիոյ ու Պուրկարիտի, այս վերջին ալ՝ Սերպիտի և այլն: Եթէ այս տեսութիւններէն մէկը Ռուսիոյ ճանկերուն մէջ իյնար, միւսերը ճակատարկանօրէն Եւրոպայի ազդեցութեան պիտի ենթարկուէին: Արդէն Ռուսիա այս անգամ ալ չարաչար կերպով խաբուեցաւ: Բայց Ռուսիա միշտ կը յուսար թէ օրին մէկը քարձեալ պիտի կընայ ոտք կոխել Պուրկարիտ: Ասոր համար մի-

Սակայն երբ ամբողջ նկատեց, որ իրենց առաջարկը — առանց զիմադրութեան գաղարեցնել անխառնաբեր — չի յարգում սկսեց անխնայ կտորատել գործիներն ու մեքենաները:

Պէտք է նկատել սակայն, որ այդ միջոցին գիմազները էին միմիայն տգէտ չհասկացող մասը — Պարսիկ և Լէզգի բանւորները և գլխաւորապէս կառավարութեան լրտեսները, որոնք ծպտեալ մտած ամբողջ մէջ գրգռում էին նրան այդ միջոցին գիմել, որպէսզի լարէ կապիտալիստին բանւորի դէմ և որ ինքը իրեն իրաւունք համարէ զէնքի գիմելու, որպէս խռովարարներ:

Յուլիսի 6-ից սկսած արդէն համատարած գործադուլ էր ամբողջ Բալխանիում: Երբ քաղաքում լուր տարածւեց թէ Բալխանին կանգնած է — այլևս ուժանակը ձգած էր — կանգնեցին ապրանքատար երկաթուղային գնացքները, ձիաքարշը, նաւերը: Հէնց որ մի նաւ էր մտնում նաւահանգիստ, անմիջապէս գործադուլի էր գատապարտում. նաւապետը նաւաստիները վերցրած դուրս էին գալիս նաւից և այլևս կորան. . . շաբաթներով չէին երևում:

Օրական վնասները միլիոններու էր հասնում. բոլոր կառավարիչներն ու կապիտալիստները հաւատացած էին թէ գործադուլը շատ չի կարող երկարել — 1 կամ 2 օր — մինչ գեռ բանւորը չէր էլ մտածում ոտք կոխել կամ աշխատանոցի մօտովն անցնել:

Եւ միայն նրան որի շոգեկաթնայում չոգի էր լինում, առանց խնայելու շարդուփշուր էին անում կաթնային մասերը (արմատը) իսկ այն նաւթահանքերը, որոնց կառավարիչները անխիղճ կերպով էին վարած մինչև այդ իրենց ծառայողներին հետ, նոքա Պարսիկ լէզգի ու տեղացիների կողմից թալանի ու կողպուտի ենթարկուց:

Պարսի գործադուլի վերաբերմամբ որպէս լրացուցիչ տեղեկութիւն կը հարկուի որ արհեստաւորները տարել են յաղթանակը: Ինչպէս գրել էի նամակիս մէջ կառավարութիւնը ստիպուած էր եղել միջամտել գործին և հաշտեցրել երկու կողմերը — բարդութիւններից խուսափելու պատճառաւ — գոհացում տալով բանւորներին պահանջներին, այն է. աշխատանքները պիտի սկսեն 6—7-ին և վերջանան երեկոյան 6—7-ը. կիրակի և սօն օրերը չպիտի աշխատեն. սոքա գլխաւոր կէտերն են:

Կանոններ մշակելը յանձնուած է մի կողմնակի անձի, որը պատրաստելով ներկայացնելու է ի հաստատութիւն, ինչպէս նաև խնայողական գանձարանի և այլն:

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Լեռնը երկունքի մէջ էր և ծնաւ մակ: Այս առածը կարելի է գործածել Ունդար կան մինիստրական ճգնաժամի և նրա շատ տխուր և խայտառակ վախճանի մասին: Ամիսներ շարաթներ Ունդարական մինիստր-նահագահ Կուէնը աշխատեց սանձահարել Անկախների կուսակցութեան բուռն ընդդիմադրութիւնը և կատաղի պայքարումները, որոնց մասին ակնարկեցինք մեր անցեալ նամակում: Օրեր ու շաբաթներ շարունակ ուժաթափ եղած մինիստրը նախագահը, գլուխը կորցրած, օրհասական ճիգեր թափեց Ունդարական Պատգ. Ժողովի կրթիտիքական դրութիւնը փրկել, շարաքատիկ զինւորական օրինագծի թողած տխուր տպաւորութիւնը և նրանից ծագած անպատկառ ժողովները մեղմացնել, սանձահարել, մինչև իսկ ոհակայական միտք յղացաւ նորին Վսեմութեան խռովելու ուղղի մէջ լուծել «անսանձ ժողովը և նոր ընտրութիւնները շանակել» եւ հէնց այն վայրկեանին, երբ մինիստրական պրոքլեյժն անհաստատ քայլերով երկրի միապետի մօտ էր մտադրում խուճապել կամ արտոյնաբար և կամ յեղափոխութեան բռնկման գուռը բանալու համար, անկարծ միանգամայն անսպասելի, երկնքից պայթած ահագնագուռ որտո՞ւ նման, պայթեց դժբախտ Գրաֆի նորակազմ մինիստրութեան գլխին մի ահուելի փոթորիկ. . . Պատգամաւորները մէկը, մի կլորիկ և ոյսով չաղա գուճար ոսկիների կոյտ է գնում նախագահական սեղանի վրայ, յայտարարելով ի լուր կայծակնահար եղած ժողովականներին, թէ իրեն առաջարկուած է իրը կաշառք այս ինչ անձնաւորութիւններից — միևնոյն է թէ այդ ինչանձնաւորութիւնները նորին Վսեմութիւններ ու Պայծառափայլութիւններ լինեն — որպէսզի անկախների կուսակցութիւնը զինաթափ անելու և նրանց «օրադրուկցիայի» անսանձ ընդդիմադրութիւնները խորտակել շանայ:

Այս պառլամենտական կեանքում միանգամայն հազուադէպ և խայտառակ երևոյթի մանրամասնութիւնները ծանօթ են, մասամբ, «Վերածնութեան» Ընթերցողներին: Մինիստրական և պետական հովերով մատակարարող կուսակցութիւնը, անզօր լինելով բարոյական ոյժով գիմազերի իւր հակառակորդների բուռն պայքարին, նեղը ընկած՝ թէև փոքրութիւն, սակայն իրենց ժողովրդի նուիրական շահերի և իրաւունքների նախանձախնդրութեան շնորհմտքերով սողորած պատգամաւորների բարոյական ոյժի առաջ — գիմում է մի խայտառակ և ստոր

միջոցի, կաշառքով, գրամով մարդոց միտքը, զգացմունքը, և համոզմունքները խորտակելու, բռնաբարելու ճանապարհին: Թէ ինչ արտասովոր և չտեսնուած իրարանցում և աննկարագրելի յուզում կարող էր առաջացնել այսպիսի մի առաջարկութիւն, այդ ինքն ըստ ինքեան հասկանալի է:

Մինիստրը — նախագահ Կուէնը և նրա երգուեալ կողմնակիցները ամեն միջոց և հնարներ գործ գրեցին, նորին Վսեմութեան անմեղութիւնը, անմեղակցութիւնը ցոյց տալու համար այս խայտառակ դէպքի մէջ: Մինչև անգամ եղան ընկերասէր, հաշուադէպ անձնազոտութեամբ օժտուած Գրաֆներ, որոնք սկսեցին իմաստով ծանրութիւնը իրենց վրայ բարդել ցանկացան. սակայն, որպէս գրութիւնը պարզեց, մինիստր-նախագահը բոլորովին անմասն չէ եղել այդ նախադրեցի մէջ և . . . կարծառեւ, յատուկ կազմած յանձնաժողովի քննութիւնից յետոյ խորտակելու վիճակին ենթարկուց:

Սկանտալներով ու գրամական ամեն տեսակ անակնկալ զեղծումներով հարուստ Ֆրանսիական պառլամենտից յետոյ — յիշեցէք Պանամայի աշխարհազոզող սկանդալները և միլիոններ մի քանի երջանիկ ամենախուր սրկորները մտնելը — աչ առաջին դէպքը կարելի է համարել, որ նախատինք և անպատուութիւն պիտի բերէ երկրի բարձր իրենց ձեռքում խաղացնող անարգ զեկավարներին:

Այս արտառոց մի դէպք է, նման ռուսական բռնապետութեան և Համբարական անսանձ փաշաների ու գատաւորների կաշառակութեան, թէև քաղաքակրթութեան ոսկեզօծ կեղևներով չընթացուած, որի խոր տպաւորութիւնը դեռ երկար կը խռովէ և կ'ալիկոծէ իրենց ժողովրդի սրբազան շահերի պաշտպան անկեղծ գործիչներին: Մարդոց միտքը և համոզումները մամոնայի անարգ փայլով են կամենում խեղդել, ոչնչացնել: Որպիսի ողորմելի միջոց: Այժմ ոչինչ չէ մնում անել նորին Վսեմութեան կողմ կուէնին, եթէ ոչ բացականչել աղիտորմ-եկայ, տեսայ և շարքառեցայ: Et finita la comedia:

Ս. Տաշիր
Լօնտօն
Ն Ա Մ Ա Կ Ս Օ Ֆ Ո Ս Յ Է Ն
— օ —
14 Օգոստ. 1903

Մակեթոնիոյ մէջ յեղափոխական շարժումները երթալով աւելի ընդարձակ ծառայ կատարան: Վերջին նեոգերները արդէն ծառային թէ ապստամբութիւնը ծագած է Խորհրդի նահանգին մէջ, ուր, ըստ Բորձրագոյն Գրան տուած տեղեկութեանց, 800 հոգիէ բաղկացայ ապստամբական խումբ մը կորուսեր ունեցած է կողէնկրասի (բերք քիլոս) շուրջը: Կէլկէլի գա-

ւառին մէջ, թուրք զինւորները կրակի տուած են շատ մը պուշկար զինոր, որոնց բնակչու թիւը ապստամբած է լուսները:

Խորհրդէ հասած լուրերը կը հաստատեն թէ՛ ապստամբները այրած են Բալխարը և Ենիքիճէ գիւղերու հունձքերը, աւերած են Խորհրդի, Լօզէն կրասի, Քուլէլի Պուրկայի հերակրահան թեկերը: Լողէնկրասի գաւառի շատ մը զինուոր, որոնք պաշտպան էին ապստամբներէ, ապստամբած են անտարները: այս պատճառաւ և նրա մայրուած է զէնքի կոչել Խորհրդի զգահատի գուճարտակները:

Վառնայի սփալսաբո, հաստարիմ հետեւող Ամբրիկայի փաշաներու գծած ուղղութեան կը շարունակէ Հնչ. գործիչներու անհաստական պատիւը արտատարել և ամեն տեսակ կեցտու միջոցներով զանոնք վարկաբեկելը:

Հայ դեղին մամուլի այդ արժանաւոր ներկայացուցիչը՝ նա, զարբէկի անհատական և ընտանեկան կեանքը բոլորովին խեղաթիւրուած ներկայացնել վեջի վեջ: Հասարակութեան (որուհի մար անչույս օրէնքի առջև հաշիւ տալու պիտի հրաւիրուի) ըսկրած է հիմա իր թունալից սրբաքները ուղղել մեր ընկերներէն Պետրոս Գալֆանիի դէմ:

Որովհետև մենք կուզենք կուսակցական պայքարը մղել միմիայն գաղափարական հողի վրայ և խիստ գատապարտելի կը գտնենք հասարակական գործիչի մը գաւանդած սկզբունքները քննադատելու փոխարէն՝ ատոր անհաստակութիւնը բարոյապէս սպաննելու չար գիտումով այլ և այլ անճիշդ ու ստաջօղ զրպարտութիւններու արձագանք բլաւ — ուստի մեր ընկերքը, փոխանակ մամուլը զբաղեցնելու իր անձնական խնդիրներով, որոշած և արդէն գիմած է Վառնայի նահանգային գատարանին, ուր պիտի կուտի հաշիւ ներկայացնել Վառնայի բաւքիլը՝ իր ստոր զըրպարտութիւններուն համար:

Ստիական տգիտութիւնը անբարեխղճութիւնը մարմնացնող ենարանիկ այս առիթէն պէտք է օգուտ քաղէ ըմբռնելու համար թէ ինչ է հրապարակագրի մը կուշումը և թէ մինչև ուր կը հասնի հանրային կամ անհաստական գործեր քննադատելու ու մտաթիւլու իր իրաւունքը:

Ինչպէս ամեն քաղաքակրթութեան, Պուրկարիոյ մէջ ալ մամուլի օրէնք կայ, որուն նպատակն է սանձահարել սփալսաբոյ պէս թերթիկները, որպէսզի անխղճօրէն չխաղան ամեն մարդու հետ: